

Արդ, ամէն տարակուսէ վեր է, որ Աղեքսանդրի առ կղեմէս ԺԱ. գրած թուղթը միութիւնասէր ոգիէ յառաջ եկած, կամ հպատակութեան կամ կաթողիկէ հաւատոյ դաւանութեան թուղթ չէ բնաւ, այլ արեւելեան ոճով գրուած գանգատագիր մըն է ընդդէմ լատին միսիոնարաց, որոնց դէմ սաստ մը կ'ուզէ Ս. Քահանայապետէն, իր դաւանութիւնն ալ գրելով՝ որ Ս. Քահանայապետն իմանայ որ Հայք եւս քրիստոնեայ են: Յայտ մասին Տէր-Յովհաննիսեան, Մսերեան, եւ Երիցեան իրաւունք ունին. եւ արդէն ոչ Ստեփանոս Ռոշքա (Ժամանակագրութիւն), ոչ Հ. Պալճեան (Աթոռ Ս. Պետրոսի), եւ ոչ Ըստկարեան (Եկեղեցական Պատմ.) Աղեքսանդր Զուղայեցի կաթողիկոսը հպատակութիւն յայտնող կաթողիկոսաց շարքին մէջ չեն դնել, եւ ոչ իսկ Ալիլոզ Երեմիայեան կը նկատէ, մանաւանդ թէ Ալիլոզ անոր դէմ կը գրէ իբրեւ հալածչի կաթողիկէից: Ասան զի Ալիլոզ իր Պատմագրութիւն կաթողիկոսաց գրքին (1713 Սեպտ. 30) մէկ ձեռագրին մէջ Աղեքսանդր կաթողիկոսի դէմ կը գրէ, զոր Յ. Թ. Տէր-Յովհաննիսեան (անդ Բ, էջ 46—47) առաջ բերած է: Ասկէ կ'իմանանք՝ որ 1707ին Կ. Պոլսոյ հայ կաթողիկէից ջարդին սկզբնապատճառը նա եղած է.

“Ետուր փակել, կ'ըսէ Ալիլոզ, վանքն Քափուչինաց որ ի Թարվէզ քաղաքի, զի մի բարձասցի սուրբ խաչն քրիստոսի ի մէջ անհաւատից, եւ զի մի կրթիցին մանկունք տառապեալ եւ աղքատ